ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0078 Երևան, Հալաբյան 41 «»

«12» 04 2011թ. 2130-10

„ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ,, ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ԹՈՒՄԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թումասյան

Շուրջ հինգ ամիս է, որ Գյումրի նոտարական գրասենյակի նոտարները վավերացում են նորակառույց բնակարանների նվիրատվության պայմանագրերը, որոնք կնքվում են մի կողմից ՀՀ-ի՝ ի դեմս ՀՀ քաղաքաշինության նախարարության և քաղաքացիների միջև: ՀՀ Կառավարությունը որոշում է ընդունել, որի համաձայն, բնակարան ստացող ընտանիքի բացակա անձանց վերաբերյալ ընտանիքի ներկա բոլոր չափահաս անդամները հայտարարություն են տալու, որ նրանց ի հայտ գալու դեպքում պարտավորվում են ապահովել բնակտարածությամբ:

Ըստ Կառավարության այդ որոշման, հայտարարություն կարող են տալ երկու դեպքում՝

1. երբ ընտանիքի անդամները դատարանի վճռով ճանաչվել են անհայտ բացակայող.
2. երբ ընտանիքի ներկա անդամները չեն կարող հիմնավոր փաստաթղթեր ներկայացնել բացակա անդամների վերաբերյալ և չգիտեն նրանց գտնվելու վայրը:

Ըստ Գյումրի նոտարական տարածքի նոտար Ռ.Մուկուչյանի՝ ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված բացատրության, դատարանի վճռով և առանց այդ վճռի տրվող համաձայնագրերը վավերացվել են նրա կողմից, /շուրջ 40 պայմանագիր/, եթե քաղաքացիները ներկայացրել են բոլոր անհրաժեշտ և հիմնավոր փաստաթղթերը: Համաձայնագրերը հրաժարվել են վավերացնել այն դեպքերում, երբ քաղաքացիներից շատերը զանկացել են տալ կեղծ հայտարարություն և դրա միջոցով

տիրանալ ընտանիքի մյուս անդամներին հատկացվող բնակտարածությանը: Նոտարին դիմող քաղաքացիների հետ զրույցներից նրա համար պարզ է դառնում, որ նրանք գիտեն ընտանիքի բացակա անդամների տեղը, բայց վերջիններս հրաժարվում են լիազորագիր ուղարկել, քանի որ համաձայն չեն տրված բնակարանը ստանալ:

Քիչ չեն նաև դեպքերը, երբ ընտանիքի անդամները բոլորովին էլ բացակա չեն, գտնվում են կողք-կողքի, բայց չեն ուզում միասին բնակարան ստանալ: Մի օր նոտարին է դիմում ընտանիքի մի անդամը հայտարարություն տալու մյուս անդամի բացակայության մասին, իսկ մյուս օրը ներկայանում է վերջինս և հայտնում, որ ինքը ներկա է և ընտանիքի անդամը կեղծ հայտարարություն է տալիս: Կամ ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկանքից պարզ է դառնում նաև, որ իբր ընտանիքի այն անդամը, ում մասին երկար տարիներ տեղեկություններ չկան, մի ամիս առաջ է ստացել անձնագիրը: Բնական է, որ վերոհիշյալ հանգամանքներով է պայմանավորված նոտարի կողմից առանձին հայտարարությունների վավերացման մերժումը: Ի դեպ, երբ քաղաքացիներին նոտարը բացատրում է կառավարության վերոհիշյալ որոշման դրույթները, նրանք հրաժարվում են փաստաթղթերը պաշտոնական մուտք անելուց, որի պատճառով էլ նոտարը գրավոր մերժումներ տրամադրել չի կարողանում: Պարտավորագիր չվավերացնելը ոչ թե կամայականության արդյունք է, այլ վերոհիշյալ իրավիճակների հետևանք: Հարկ է նկատել, որ ընդհանրապես խոսք չի կարող լինել հնարավոր կոռուպցիոն ռիսկերի մասին, քանի որ նոտարին ավելի ձեռնտու է վավերացնել պարտավորագրերը, գանձել իր ծառայության վճարը, քան մերժել քաղաքացիներին:

Բացի այդ, նոտարի զգուշավորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ օրենքով ինքը կրում է գույքային պատասխանատվություն: Պարտավորությունը ստանձնած, իսկ հետո բնակարանը վաճառած ընտանիքի անդամները եթե իրենց պարտավորությունը չկատարեն, ընտանիքի հայտնված անդամները դիմելու են դատարան՝ հայտնվելով դատական քաշքշուկների մեջ:

Նոտարը այս մասին բազմիցս ահազանգել և տեղեկացրել է թե քաղաքաշինության, և թե արդարադատության նախարարությանը, որպեսզի քաղաքաշինության նախարարության կողմից կազմվող նվիրատվության պայմանագրերում ֆիքսվի պարտավորություն ունենալու մասին, որպեսզի հետագայում

այդ գույքը վաճառել չկարողանան և չխախտվի ընտանիքի բացակա անդամի սեփականության իրավունքը:

ՆՈՏԱՐԻԱՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ Մ. ԳԱԲՈՅԱՆ